ԼՈՒՍԻՆԵ ՂՈՋԻԿՅԱՆ

ԵՍԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆԸ, ԿՅԱՆՔԻ ԻՄԱՍՏԱՎՈՐՄԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲԱԶԵՆՅԱՆԱԿԱՆ ՏԻՊԸ

Նար-Դոսը ստեղծագործում էր այնպիսի դարաշրջանում, երբ բուրժուական հասարակության մեջ սրված էին մարդկային հարաբերությունները, ինչը չէր կարող վրիպել արվեստագետի սրատես աչքից: Նա հոգեբանական նուրբ զգացողությամբ, գրական մեծ վարպետությամբ կարողացավ ստեղծել այնպիսի գործեր, որոնցում արտացոլված է ոչ միայն դարի պատկերը, այլ նաև իր վերաբերմունքը դեպի այդ աշխարհը, դեպի իրականությունը, մարդկային արատավոր բարքերը, դրանց բեկումը հասարակության և անհատների հոգեբանության մեջ: Չէ՞ որ մարդը որպես անհատ կազմավերվում է այդ հասարակության մեջ՝ իր երևակայությամբ, պատկերացմամբ ու աշխարհըմբռնմամբ, որոնց ձևավորմանը նպաստում են հաև միջավայրը, դաստիարակությունը: Առաջայինն այստեղ պետք է համարել անհատի մտածելակերպը, որը նրան հնարավորություն է տալիս կողմնորոշվելու, միջավայրում իր դիրքը գրավելու: Մարդն ինքը պիտի ստեղծի իր համար որոշակի սահմաններ և ըստ այդմ գործի, որովհետև «տարբեր բնական հակումներն ու կենսապայմանները պահանջում են ինչպես տարբեր ոգեղեն-բարոյական դիետա»:[1]

Նար-Դոսի երկերում հանդիպում են միևնույն սոցիալական դասին պատկանող, սակայն տարբեր բնավորություն ու հակումներ ունեցող անձինք, տարբեր հասարակության տեր անհատներ, որոնցից յուրաքանչյուրն ունի որոշակի աշխարհայացք, գիտակցում է իր արարքը: Ասենք նաև այն, որ պատահում ենք այնպիսի կերպարների, որոնց համար դժվար է գիտակցել իրենց արարքը, ինչը և դառնում է ճանաչման կարևոր չափանիշը: Դեռևս Արիստոտելն էր մարդու ճանաչման հիմքում դնում նրա արարքը: Իհարկե, այստեղ գործ ունենք բնազդային և գիտակցական արարքի հետ, որովհետև վերջինի դեպքում մարդ կարող է գիտակցել ու վերլուծել իր մեջ կատարվածը, պարփակվել կամ ցույց տալ այն, ինչը հարկավոր է, իսկ առաջինի դեպքում վերանում են անհատի սոցիալ- հոգեբանական գործոնները, երևան հանելով մարդու «բաց» հոգին: Ճշմարիտ էությունը: Այստեղ նա ի գորու չէ թաքցնել իր եսը:

Արարքը բացատրվում է նաև հակադրության մեջ դնելով հերոսներին կամ զուգահեռ անցկացնելով նրանց մեջ: Օրինակ, Նար-Դոսի մոտ հանդիպում ենք անձնվեր, գործունյա, մյուս կողմից, կյանքից դուրս մնացած կերպարների, որոնք փորձում են հասնել սեփական անձի երանությանը՝ մտածելով միայն անհատական բարօրության մասին, ինչը հաստատում է եսասիրությունը, որը

[1] Ռ. Շտայներ, Ազատության փիլիսոփայություն, Ե.,1938, էջ. 135.

խորապես արմատավորված է նրանց մեջ՝ «ամեն ինչ ինձ համար և ոչին ուրիշին»: Շատ ճշմարիտ է բնորոշում Շոպենհաուերը այդպիսի մարդկանց եսապաշտությունը՝ «Ես և էգոիզմը - դա նույնն է»[2], և եթե վերանում է վերջինը, անհետանում է նաև առաջինը:

Ընդհանրապես Շոպենհաուերը տարբերակում է էգոիզմի երկու աստիճան, էգոիզմ, որը միայն իր սեփական բարօրությանն է ձգտում, և էգոիզմ, որին ուրախություն է պատճառում ուրիշի դժբախտությունը:

Եթե անդրադառնանք Նար-Դոսի հերոսներին, կպարզվի, որ առաջին շարքին պատկանող հերոսները մտածում են այն բանի մասին, թե ինչպես կարող են հաճույք պատճառել իրենք իրենց, քաղում են կյանքից այն, ինչ կարող են և երբեք չեն հրաժարվում օգտվել ձեռք բերվելիք վայելքներից, որովհետև նրանց ընբռնմամբ (Թուսյան, Բազենյան) «...կյանքը բոպեական հաճույք է և հաճոյական բոպեների մի շարահատ շղթա, մինչև որ կգա անխուսափելի սահմանը, որից դենն արդեն Նիրվանայի թագավորությունն է»[3]:

Նրանց մեջ բացակայում է հեռանկարը, ապրում են այսօրվա կյանքով և «ներկայացնում են այն խավը, որին բնորոշ է անհեռանկարայնությունը և անկումայնությունը, նրանք ավելորդ մարդիկ են: Եվ սրանով էլ այս կերպարները դառնում են իրենց իլեականությունը ներկայացնող ինքնքտիպ մոդելներ, քանի որ նրանց ծնող սոցիալ-տնտեսական ֆորմացիային միշտ էլ բնորոշ է հավելյալ գոյությունների փաստը»:[4] Իսկ ապագայի մասին խոսք լինել չի կարող և ինչու մտածել, քանի որ կա մահ: Ընդհակառակը, «Մահվան գաղափարը խելացի մարդու համար մեծ խթան պետք է լինի ամեն բան անելու... ինչը որ կարող է հաճույք պատճառել»: Վերոհիշյալ հատկություններով օժտված Թուսյանը («Սպանված աղավնին») զարգացրել է իր երևակայությունը էպիկուրյան փիլիսոփայության մեկնաբանությամբ: Նրա տեսակետը ավելի համապատասխանում է կիրենական դպրոցի հիմնադրիների կարծիքին, որոնք պնդում էին, որ հաճույքը բխում է զգացմունքների բավականությունից և մարդ պետք է ձգտի ավելի շատ ստանալ այդ բավականությունը: Այսինքն, մարդու հիմնական նպատակը պետք է ուղղված լինի այն կետին, թե ինչպես իր կյանքը լցնի հաճույքներով ու վայելքներով:

Իսկ ըստ էպիկուրի՝ հաճույքը գոյություն ունի տառապանքի բացակայության դեպքում միայն, որովհետև հաճախ մեծ բավականություն ենք զգում, արդյունքում մեծ ցավ ապրելով կամ պատճառելով: Ահա ինչպիսի խաղ է խաղացել Թուսյանը Սառայի հետ, որը անարգված է համարում իր պատիվը, տառապում այն բանի համար, որ անկեղծորեն սիրել է ու տրվել մի

---

[2] Բ. Շոպենգաուեր, Мир как воля и представление, Минск, 1998, стр. 466

[3] Նար-Դոս, երկերի ժողովածու հատոր 1, Ե., 1989 էջ 594

[4] Վ. Սաֆարյան, Գրողի և կերպարի անհատականությունը, Ե., 2001, էջ 212

անձնավորության, որը ցինիկության մարմնավորումն է: Ինչ-որ տեղ կարծես մեղադրելի չէ Թուսյանի արարքը, եթե այն համեմատենք իր հաջորդ, ավելի կատարելագործված տիպի՝ Բազենյանի հետ, որովհետև նա իրոք տվյալ պահին սիրել է և երբեք նպատակ չի ունեցել խաբելու իսկ Բազենյանը հատուկ դիտավորությամբ փորձում է գայթակղել մի նուրբ կանացի սիրտ, քնքուշ ու վեհ զգացմունքներով հարուստ մի էակի, որի համար հանդուրժելի չէ դիմացինի հասցրած վիրավորանքը: Այստեղ է, որ մարդը մանրանում ու անէանում է որպես գոյություն, հասարակության համար դառնալով կատարյալ փորձանք:

Այդ իսկ պատճառով պետք է հայացքը միշտ ուղղես արարքիդ հետևանքների ճիշտ ընկալմանը, որովհետև հակառակ ըմբռնումը կարող է վնասել թե սեփական անձիդ, և թե այլոց: Ըստ նրա կա հաճույքի երկու կարգ անխռով հոգի և տառապանքի պակաս ու ազատություն: Իսկ ե՞րբ է մարդը ազատ, երբ ազատ գործելու դեպքում էլ չի անտեսում բարոյական նորմերը:

Ա. Ֆրանսը ևս բարոյականության աղբյուր համարում է տառապանքն ու սերը. «Անոր կը պարտինք ամեն ինչ որ կայ մեր մեջ բարի, ամեն ինչ, որ գին կուտայ կեանքին... »[5]: Ազատ գործելու դեպքում մարդ ենթարկվում է միայն ինքն իրեն, անում է այն, ինչ ցանկանում է, առանց հաշվի առնելու ստեղծված դրդապատճառներն ու մոտիվները, որոնց միայն անազատություն են առաջ բերում: Այստեղ հասկանալի է դառնում Հ. Սոլիկյանի՝ եկեղեցին ամենաառաջին խորհրդատու համարելու միտքը, որը մերժում է քո կամքը և թելադրում իրենը, այսինքն, անազատություն է սերմանում:

Մոնիստական տեսության համաձայն մարդը լիովին չի կարող լինել ազատ կամ անազատ, առկա է թե մեկը, թե մյուսը, որովհետև ազատ է մարդը այն ժամանակ, երբ կամքի ուժը գերիշխում է կրքերի, զգայական ցանկությունների վրա: Իսկ մարդ չի կարող այդպես լինել, որովհետև, եթե նույնիսկ շեղվի արտաքին պարտադրանքից, նրա մեջ ծայն է բարձրանում խիղճ կոչվածը և ինչ-որ տեղ կանխում է ազատությունը:

Իսկ Շտայները քարոզում է, որ եթե ուզում ես ազատ լինել ուրեմն «չպետք է թույլ տաս որ ճնշվի ազատությունը՝ այն ենթարկելով ընկալելի կամ ընկալումների համանմանությամբ մտածված ինչ-որ էակի հեղինակությանը կամ, վերջապես, վերացական ներքին ծայնին, որ մեկնում են իբրև «խիղճ»[6] »: Եվ հենց այստեղ է, որ կվերանա ազատության ու անհրաժեշտության հակասությունը, որովհետև մարդ կգործի իր սեփական ներքին բնությամբ: «Ազատասիտ» մարդու մեջ չի կարող արձագանքել խիղճը: Եթե ինչ-որ տեղ էլ երևա այն, գործողը մշտապես փորձում է ճնշել, որպեսզի չհանձնվի, չտրվի ինչ-որ գաղափարի: Ըստ բազենյանական տիպի այդ խիղճ կոչվածը ձևական տարր է,

---

[5] Ա. Նրանս, Էպիկուրի պարտեզը, Փարիզ, 1901, էջ 10:
[6] Ռ. Շտայներ, Ազատության փիլիսոփայություն, Ե., 1938, էջ 121:

ինչպես առաքինությունը, բարությունը, ամոթը և այլ տարրեր: Չպետք է անտեսվի բարոյականը, քանի որ «անհայտը իր պատկերացումները իրագործելու համար նրա բարոյական երևակայությունը միջամտում է ընկալումների մի որոշակի ոլորտ»[7], իսկ այդ ընկալումները չեն ստեղծվում, այլ վերափոխվում է համապատասխան դաստիրակության ու միջավայրի, որը պետք է ուղղված լինի «բարոյականության, սիրո ու համակրանքի լայն զարգացմանը դեպի մարդ-անհատ»:[8]

Երկրորդ տարբերակում գործ ունենք չարաստեղծ, ուրիշի զգացմունքների հետ խաղացող անձնավորության հետ: Այսպիսիք ջանում են բարձրացնել իրենց դիրքը, ոչնչացնել այն, ինչ խանգարում է դրան, և դրա համար պատրաստ են դրմել ցանկացած նսեմության: Մի՞թե Բազենյանք («Մահը») արարքները այդ չեն վկայում: Նա ոտնահարում է ընկերական, հայրենասիրական և ընդանիրապես ցանկացած զգացմունք՝ միմիայն ի դրիրքը բարձրացնելու, բարեկեցիկ կյանք վարելու համար: Բազենյանին «հարգում են» բոլորը: Նա ամենուր ջերմությամբ ընդունվում է: Սիրով է հյուրընկալվում նրան Մահյանը, շահում նրա սիրտը՝ օգտվելով նրա բարությունից, գռփում ինչքան հնարավոր է:Նույնիսկ հասցնում այն բանին, որ Մահյանը ինքն է իր ձեռքով նվիրատվություն անում՝ներքին ծիծաղ առաջացնելով Բազենյանի մեջ, նաև յուր մեջ փառաբանելով հմայքը, որով կարողանում է խաբել մարդկանց: Նույն ստորությամբ է վարում Մարությանների ընտանիքի հետ: Իր հարուստ բառապաշարով ու կեղծ հայրենասիրական գաղափարներով, արժանանում է նրանց վստահությանը, արդյունքում առաջացնելով հուսալքություն ու ատելություն:

Շատ դժվար է մեռցնել նմանների եսասիրությունը, որը նրանց գոյության հիմքն է: Բազենյանական տիպին հատուկ է ուժեղ կամքը, «նրանց մեջ զարգացած է կյանքին հարմարվելու ընդունակությունը, ապրում են ոչ այքան իրենց համար, որքան հասարակության աչքում բարձր դիրք գրավելու նպատակով: Կասկածունքը չի մաշում այս մարդկանց, վստահ են իրենց ուժերի վրա և համարձակ»[9]:

Սոկրատեսի ըմբռնմամբ «ոչ ոք չար կամ բարի չի ծնվում, այլ միայն իր անգիտակցության պատճառով է դառնում այդպիսին, որի կանխմանը կնպաստի իմաստության, մտքի զարգացումը»[10]:

Իսկ Նար-Դոսը հակված է այն մտքին, որ բազենյանների չարագործությունն ու ոճրագործությունը՝ որպես խորը զարգացած մի հատկություն, չի կարելի կանխել, անհրաժեշտ է տարիներ, մի հեղաշրջում, որը կվերափոխի ու կջնջի նմանների դարը:

---

[7] А. С. Шакир-Заде. Мыслители прошлого. М., 1963, с 133

[8] Ջ. Ստյուարտ Միլի, Ազատության մասին. Մոսկվա, 1898, էջ 15:

[9] Ա. Տերտերյան, Երկեր, Ե., 1980, էջ 111.

[10] Ե. Ֆրանգյան, Սոկրատեսի բարոյագիտությունը, Թիֆլիս, 1913, էջ 32:

Որքան անցանկալի են նրանց գոյությունը, սակայն, բազում է դարը այդպիսիներով ու նրանց պախարակելի գործունեությամբ: Ավելորդ է խոսել այդ տիպի մարդկանց նուրբ ու մաքուր զգացմունքների մասին: Նրանք, ովքեր հեշտությամբ են տրորում մարդկային գեղեցիկ հատկանիշները, չպետք է փորձել նրանց մեջ տեսնելու վսեմը, գնահատելին, որովհետև ամեն ինչ կառուցված է բնազդայինի, անասնականի վրա: Թե Թուսյանին, և թե Բազենյանին խորթ է ազնվիրաբար սիրելու, նվիրվելու գաղափարը: Գուցե պատճառը դաստիարակությունն է, միայն ներկայով ապրելու գաղափարը, բոլոր դեպքերում գոնե մարդ պիտի զգա իր մեղսագործությունը: Թուսյանն անկեղծորեն խոստովանում է, որ չի գիտակցում իր սխալը և խնդրում ապացուցել, որպեսզի կարողանա զգալ իր մեղքը. «Եվ ահավասիկ հաստատում եմ աշխարհին ու ամենքին.- ես մեղավոր չեմ, ես մեղավոր չեմ... որովհետև ... աշխարհիս երեսին արդար ու մեղավոր չկա, չկա՛ քեզ ասում եմ, և մարդ ամեն բան, լավն էլ վատն էլ անում է բնության թելադրանքով»:

Նրանց ըմբռնմամբ «Ապագա չկա, որովհետև անհայտ է, իսկ ինչ որ անհայտ է, այդ մասին մտածելն ու հոգալը բնականաբար հիմարություն է: Սահվան մասին մտածում են վախկոտները այսինքն նրանք, որոնք վստահություն չունեն իրենց ուժեր վրա»: Այստեղ հասկանալի է դառնում նրանց ներկայով ապրելու սկզբունքը և այն, որ քերականության միջից ցանկալի է ջնջել ապառնի ժամանակը, նաև անցյալը՝ չհիշելու իրենց հանցավոր արարքները:

Մեկ փաստ ևս, որ նրանք սիրելու ունակ չեն: Նույն խայտառակ դրության մեջ է ընկնում Բազենյանը, որի դիմակը պատռվում է, երբ «կրթված մարդը հանկարծ իջել էր միչև վայրենու աստիճանը, որով բանական արարածը գազան էր դարձել...», որից ավելի պետք է խուսափել, քան՝ գազանից: Որ նման հատկություններով օժտված մարդիկ սիրելու ընդունակությունից զուրկ են, Նար-Դոսը հաստատել է բազմիցս: Նրա ինքնագիր գրվածքներից մեկում՝ «Թափված թերթեր» հատվածում, հերոսը մի պահ որոշում է ամուսնանալ, բայց վերլուծելով իր սեփական զգացմունքները, համոզվում է, որ կա միայն կիրք, ցանկություն, այը առանց ընտանիք կազմելու էլ հնարավոր է բավարարել, իսկ ամուսնությունը ավելորդություն է ու գլխացավանք:

Այսինքն, հերոսի «բարոյական» հայացքների մեջ շեշտված է ինքնապահպանության ու եսասիրության մղումը, քանզի բանական-հեգեբանական բնությունը ստորադասվում է, որովհետև նա երկրորդական է համարում մի բան, որի վրա գեղագետ Նար-Դոսը փորձել է հիմնավորել իր գաղափարագեղագիտական պահանջը, այն է՝ ընտանիքը, բարոյականությունը, հավատարմությունն ու սերը, որոնք հիմք կարող են հանդիսանալ հանրության բարելավման ու բարգավաճման համար: